# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 10 | «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ | Բաղկացած է քթամասից, վամպից(սայուզկա), կողամասերից, հետնամասից, միջնատակից, հիմնական ներդիրից, հանովի-դնովի ներդիրից, արտաքին ներբանից: Կրնկամասը կոճերից ցածր, կոշիկի կապումը երկկողմանի ձգվող էլաստիկ ժապավենով: Վամպը (սայուզկան) և քթամասը կարվում են 2 կարով: Երեսամասը պատրաստված է խոշոր եղջերավոր անասունի բնական սև կաշվից, բարձր որակի: Կաշվե դետալները հակառակ կողմից պետք է մշակված լինեն տաքացվող սոսնձով գործվածքով, որը կտա երեսամասին հավելյալ ամրություն և կհաղորդի չափավոր ծավալային կայունություն: Արտաքին ներբանի կրունկը պետք է լինի միաձույլ, կրունկի բարձրությունը 9-9,5մմ, թաթի հատվածի երկայնական կտրվածքի հաստությունը առնվազն 3մմ: Իսկ կողամասերի խորությունը 4-4,5մմ: Ամրանում է բարձր ճնշմամբ, սոսնձման եղանակով: Պետք է պատրաստված լինի մաշակայուն թերմոպլաստիկ կաուչուկից: Ներբանը գետնին պետք է հպվի հարթ, առանց ճոճվածքի, քթամասի բարձրությունը գետնից՝ ոչ ավել 1,6 սմ: Հանովի-դնովի ներդիրը պետք է պատրաստված լինի բնական կաշվի և պոլեուրետան հումքի համադությունից, ամրացման եղանակը միաձույլ(прямое литьё), որը կապահովի հավելյալ ամրություն և երկար շահագործում: Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված 2.0-2.2 մմ հաստության բնական՝ կոշիկի |

| | | |
|---|---|---|
| | | համար նախատեսված ամբողջական ստվարաթղթից և նույն հաստության մինչև թաթը շարունակվող ստվարաթղթից, որոնց մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Քթամասը և կրնկամասը պետք է մշակված լինեն պինգ-պոնգ տեսակի թերմոպլաստիկ նյութով, որը կհաղորդի կոշիկին հավելյալ ամրություն և առաձգականություն: Կոշիկի կաղապարը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 3927-88-ի պահանջներին: Ներքին ծածկույթը պատրաստված է բնական կաշվից(սպիլոկից) և բիազից: Կոշիկի ներսում մշակվող սպիլոկի հաստությունը պետք է լինի 0.9-1.1 մմ: Կոշիկի արտաքին տեսքը համաձայնացվում է Գնորդի հետ: Փաթեթավորումը ստվարաթղթե արկղերով, արկղի մեջ 10-20 զույգ, արկղերը պիտակավորված: Պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Կոշիկի չափերի քանակները տրամադրվում է Գնորդի կողմից: Արտադրվում է 38-47 չափսերի: Մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված, հավաստագրված փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված եզրակացություն՝ Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 10 | | |